# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 127-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.05թ.թիվ 2387-Ն որոշմամբ և հաշվի առնելով համայնքի անշարժ գույքի վերահասցեավորման անհրաժեշտությունը

Որոշում եմ՝

1. Ք. Ախթալա Թումանյան փ. 9 կադաստրային քարտեզի 06-003-016-001-007-000004 ծածկագրով կառուցման և սպասարկման 0,00154 հա հողամասը և 06-003-016-001-007-000004-001 ծածկագրով ավտոտնակը, վերահասցեավորել ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, Ախթալա քաղաք, Հ.Թումանյան փողոց, 3-րդ փակուղի, 6/4 փոստային հասցեի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 128-Ա

### ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 09 ՄԱՐՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ N 342-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՈՒՂՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ << Քաղաքացիական օրենսգրքի >> 188-րդ հոդվածով ՀՀ Հողայինօրենսգրքի 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներով , ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 09/03/2006 թվականի թիվ 342-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 31/05/2022 Փաստաթղթի N՝ Կ-31052022-06-0064 և 31/05/2022 Փաստաթղթի N՝ Կ-31052022-06-0031 կասեցումները,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ախթալա համայնքի կազմի մեջ միավորված Նեղոց գյուղի կադաստրային քարտեզում կատարել ուղղում, ՀՀ կառավարության 09/03/2006 թվականի թիվ 342-Ն որոշմամբ Նեղոց գյուղական բնակավայրին որպես գյուղատնտեսական այլ հողատեսք հողամաս փոխանցված 06-080-0107-0010 ծածկագրով 1.22 հա հողամասի նպատակային նշանակությունը հաստատելով որպես գյուղատնտեսական այլ հողատեսք:
2. Համայնքի գործող կադաստրային քարտերտեզում 06-080-0107-0010 հողամասը ուղղել որպես գյուղատնտեսական այլ հողատեսք:
3. Նշված հողամասի առաձնացվող 0.99655 հա և 0.22047 հա հողամասերը ներկայացնել պետական գրանցման որպես գյուղատնտեսակ այլ հողատեսք հողամասեր:

4. Պետական գրանցում ստանալուց հետո նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ հողամասային հաշվեկշռում:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 129-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, 17-րդ հոդվածով՝

***Որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 9-ի արտահերթ թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի և Ախթալա համայնք Նեղոց բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում առաջարկվող հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների մասին:
3. <<Ախթալա համայնքի Շամլուղ, Ճոճկան, Նեղոց բնակավայրերում ջրատարերի, Ճոճկան գյուղում՝ ՕԿՋ-ի կառուցում» 2022 թվականի սուբվենցիոն ծրագրում փոփոխություն կատարելու մասին: :
4. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի սեփականություն հանդիսացող գույք հանդիսացող մշակույթի տան շենքից վարձակալությամբ սենյակներ տրամադրելու մասին:
5. ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանին պատկանող գույքերը օգտագործման տրամադրելու համար վարձավճարներ սահմանելու մասին:
6. ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանին պատկանող գույք հանդիսացող հենասյուները օգտագործման տրամադրելու մասին:
7. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայանքի ընտանիքներին զավակի ծնվելուց միանվագ գումար հատկացնելու մասին:
8. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում հարազատին կորցրած յուրաքանչյուր ընտանիքին միանվագ գումար հատկացնելու մասին:

9. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 130-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇՏՎԱԾ /ՓՈՓՈԽՎԱԾ/ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերիմասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով,ի կատարումն ՀՀ կառավարության 2005թվ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման և հիմք ընդունելով Ախթալա համայնքի ավագանու 2009թվ.-ի սեպտեմբերի 30-ի թիվ 65-Ա որոշումը, հիմք ընդունել համայնքի կադաստրային քարտեզը, հաշվի առնելով համայնքի անշարժ գույքերի վերահասցեավորման անհրաժեշտությունը,

Որոշում եմ՝

1. Ք. Ախթալա Շահումյան 4 2-րդ մուտք թիվ 9/10 բնակարան հասցեի անշարժ գույքը /կադաստրային ծածկագիր՝ 06-003-022-001-002-021-022/ վերահասցեավորել՝ ՀՀ , մարզ Լոռի, համայնք Ախթալա, քաղաք Ախթալա, Ս. Շահումյան փողոց,4 շենք, 23 բնակարան փոստային հասցեի:

2.Ուժը կորցրած ճանաչել Ախթալա համայնքի ղեկավարի 17 մայիսի 2021 թվականի թիվ 86-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար** **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 131-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով ևՀՀ կառավարության 29.12.05թ.թիվ 2387-Ն որոշմամբ ,

Որոշում եմ՝

1. Ք. Ախթալա Շահումյան փողոց 06-003-022-001-011-000009 կադաստրային ծածկագրի 20,46 քառ.մ կառուցման և սպասարկման հողամասին և 06-003-022-001-011-000009-001 ծածկագրի 18,0 քառ.մ մակերեսով ավտոտնակին /սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1330052 վկայական/ տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ախթալա համայնք Ախթալա քաղաք Ս.Շահումյան փողոց 4/9 :

2.Ուժը կորցրած ճանաչել Ախթալա համայնքի ղեկավարի 17 մայիսի 2021 թվականի թիվ 87-Ա որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 132-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՃՈՃԿԱՆ 1 -ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17/1 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 4-րդ մասի 43-րդ հոդվածի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի << ՀԱՍՏԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ) ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30 - Ի N 479 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 828-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 9 նոյեմբերի 2005 թվականի N 2245-Ն որոշումը և ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ կոմիտեի կողմից տրված 04052022-06-0014 վկայականը

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի գյուղ Ճոճկան 1-ին փողոց թիվ 17/1 հասցեում գտնվող, մառանի շինության գործառնական նշանակությունը փոփոխել որպես խանութ սրահի, իսկ զբաղեցրած հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Նշված շինության գործառնական նշանակության փոփոխությունը կատարել առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ շինարարական աշխատանքներ չեն կատարվել:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը և փոփոխված գործառնական նշանակության համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

5. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 133-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.05թ.թիվ 2387-Ն որոշմամբ

Որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզ Ախթալա համայնք գյուղ Նեղոց կադաստրային քարտեզի 06-080-0004-032 ծածկագրից առանձնացվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.07615 հա մակերեսով հողամասին և հողամասում առկա շենք շինություններին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, գյուղ Նեղոց, 1-ին փողոց, 33 փոստային հասցեն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. ԹԱՄԱՋՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 134-Ա

### ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՂՈՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-080-0004-0032 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՈՎ ( ՄԱՌԱՆ, ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐ ) ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ 0.07615 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ 50-Ն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, ՀՀԿառավարության13 նոյեմբերի 2008 թվականի N 1328-Նորոշմամբ և հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվելէմինչև 2001 թվականիմայիսի 15-ը, ինչպես նաև նրանց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաղթեր և հողհատկացման հիմքեր ինչպես նաև ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից համաձայն 20/05/2022թ. Թիվ ԱՏ-20052022-06-1012 տեղեկանքի ( գաղտնաբառ՝ D9HQ76NM26MX) նշված ծածկագրի գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցում և հաշվառում իրականացված չէ և բնակելի տուն և օժանդակ շինությունները կառուցված չեն ՀՀ << Հողային օրենսգրքի >> 60-րդ հոդվածով սահմանված հողամասում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարինե Սերյոժայի Բարսեղյանի /ծնված՝ 11.08.1963 թվական/ կողմից որպես սեփական գույք տիրապետվող Ախթալա համայնքի գյուղ Նեղոց 1-ին փողոց, 33 փոստային հասցեի /կադաստրային ծածկագիրը 06-080-0004-0032 / 1991 թվականին կառուցված ՝ բնակելի տունը, մառանը և երկու լողավազանները, ինչպես նաև զբաղեցրած 0,07615 հա հողամասը օրենքի ուժով ճանաչել Կարինե Սերյոժայի Բարսեղյանի սեփականությունը ՝ որպես սեփական գույք:

2. Օրենքով սահմանված չափից ավել զբաղեցրած հողամասի առյակության դեպքում օրենքով սահմանված կարգով ուղղակի վաճառքով վաճառել Կարինե Սերյոժայի Բարսեղյանին:
3. Սույն որոշմամբ օրինականացված գույքերը և զբաղեցրած հողամասը բավարարում է <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ 50-Ն օրենքով նախատեսված պայմաններին
4. Վերը նշված շինությունների զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ ՀՀ <<Հողային օրեսնգրքի >> 60 – րդ հոդվածով սահմանված հողամասերում:
5. Հողամասի սահմանները և շինության գծագիրը՝ հատակագիծը, որոշվում է օրենսդրությամբ սահմանված կարգով Համայնքի ղեկավարի կողմից հաստված <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագիծերով:
6. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ Կ.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ դիմումը, անձնագրի պատճե, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը:

**Համայնքի ղեկավար՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**